ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Հրանտ Առաքելյան
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող
Սուսաննա Վարդանյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարանի
Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության
ամբիոնի դասախոս

Ժամանակակից Իրաքի տարածքում գտնվող Գավգամել կոչվող (այդտեղի բարբառով՝ «ուղտի տուն») տարածքում մ.թ.ա. 331թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ անտիկ ժամանակաշրջանի առավել նշանակալի ճակատամարտերից մեկը: Այդ ճակատամարտում, որի ազդեցությունը շատ ժողովուրդների ճակատագրերի վրա շարունակվեց մի քանի հարյուրամյակ, բախվեցին մակեդոնական թագավոր Ալեքսանդր III-ի և պարսկական «արքայից արքա» Դարեհ III-ի բանակները: Պարսկական բանակի ջախջախմամբ նշանավորվեց Աքեմենյան հզոր պետության կործանման սկիզբը և առավելապես դրա տարածքում Մակեդոնյան կայսրության ձևավորումը, որը Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո՝ մ.թ.ա. 323 թվականին սկսեց քայքայվել: Երկու տարի անց պարսկական պետության նախկին սատրապներից մեկը՝ Երվանդ III-ը, ով ավելի վաղ իրեն թագավոր էր հռչակել, անվանապես դադարեց կախման մեջ լինել Ալեքսանդր Մակեդոնացու զորավար-ժառանգորդներ դիադոքոսներից, ովքեր նրա մահից հետո սկսել էին ակտիվորեն բաժանել կայսերական ժառանգությունը: Հենց մ.թ.ա. 321 թվականը, այլ ոչ թե դիադոքոսների կողմից չընդունված մ.թ.ա. 331 թվականն է պաշտոնապես ընդունված պատմական թատերաբեմում անկախ Այրարատյան թագավորության՝ Մեծ Հայքի վերջնական հաստատման տարեթիվը համարել:

Իհարկե, դա ոչ առաջին, ոչ էլ առավել ևս վերջին հայկական պետությունն է Առաջավոր Ասիայի տարածքում: Այսպես, Երվանդ I-ը՝ Երվանդունիների դինաստիայի հիմնադիրը, եղել է Հայկական պետության թագավորը մ.թ.ա. VI դարում, այնուհետև Երվանդունիները դարձան Կյուրոս Բ Մեծի հիմնադրած Աքեմենյան կայսրության տոհմական սատրապները՝ թագավորի ազգականների արտոնյալ կարգավիճակով և, վերջապես, նորից անկախ պետության լիիրավ կառավարիչներ դարձան արդեն հիշատակված մ.թ.ա.321 թվականին: Երվանդունիներից հետո երկիրը կառավարեցին նրանց ազգական Արտաշեսյանները, իսկ հետո՝ Արշակունիների հայացված պարսկական դինաստիան: Այնպես, ինչպես մյուս պետությունների, այդպես էլ Մեծ Հայքի պատմության մեջ եղել են վերելքներ ու վայրէջքներ: Տիգրան Բ Մեծի օրոք (մ.թ.ա. I դար) Հայաստանը ոչ երկարատև ժամանակահատվածի ընթացքում եղել է կայսրություն, որի սահմանները ձգվել են Քուռից մինչև Հորդանանը, Կասպից ծովից մինչև Միջերկրականը, իսկ Տիգրան Բ-ն կրել է «արքայից արքա» տիտղոսը: Բայց եղել են նաև ինքնիշխանության լրիվ կամ մասնակի կորստի, վասալության, ավելի հաճախ՝ Հռոմեական կայսրությունից, իսկ ավելի քիչ՝ Պարսկաստանից և դրվագներով՝ Սելևկյանների կայսրությունից ձևական կամ նույնիսկ սիմվոլիկ կախվածության ժամանակաշրջաններ:

Փաստորեն, Մեծ Հայքը չհաշված կայսերական վերելքի ժամանակաշրջանը, զբաղեցրել է տաս և ավելի անգամ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը գերազանցող տարածք, իսկ ժամանակ առ ժամանակ նրա տարածքի մեջ մտնող կամ նրանից կախված Փոքր Հայքի, Ծոփքի, Կոմմագենեի ու Հայկական Մեսոպատամիայի հետ միասին հայկական պետության տարածքը գերազանցել է 400 հազ. քառ.կմ-ը: Դա բավականին պատկառելի թիվ է, տարածությամբ սահմանափակված, ժողովուրդներով ու երկրներով «հագեցած» տարածաշրջանի համար: Մեծ Հայքի բացառապես հայկական բնակչությունը տատանվել է 3-4 միլիոնի միջև, որը կազմել է անտիկ աշխարհի բնակչության ավելի քան 1%, հետևաբար՝ երկրագնդի մասշտաբով հայկական պետության բնակչության տեսակարար կշիռը գերազանցել է ՀՀ համապատասխան ցուցանիշը 30 անգամ:

Ըստ Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու, Մեծ Հայքը բաղկացած է եղել 15 նահանգներից, ներառյալ՝ Արցախը, որի սահմանները, անցել են Արաքս և Քուռ գետերով: Սրա մասին չպետք է մոռանան Ղարաբաղյան կոնֆլիկտի ընթացքում ազատագրված տարածքները դիվանագիտական աճուրդի հանելու սիրահարները, որոնք հայտարարում են, թե «դա մեր հողը չէ»: Իսկ ո՞ւմն է դա, եթե ոչ բնիկ բնակչությանը: Կարո՞ղ է քոչվոր օղուզական ցեղերի հետնորդներինը, որոնք առաջին անգամ այս տարածքներում հայտնվել են միայն XI դարում և որոնց նախնիների հայրենիքն իրենց, իսկ տեսակետից Ալթայում գտնվող Էրգենեկոն տեղանքն է: Եվ քանի որ այս թեման է շոշափվում, դյուզն ասած, ինչո՞ւ պետք է կողմերի միջև խաղաղության պայմանագիրը կնքվի ոչ թե պատերազմի արդյունքներով(թերևս ոչ մեծ ճշգրտումներով), ինչպես միշտ եղել է համաշխարհային պատմության մեջ, այլ՝ ինչ-որ «սկզբունքներից» ելնելով: Իր տարածքով ու հնարավորություններով Հայկական թագավորությունը գտնվել է անտիկ աշխարհի երկու հզոր հակամարտ պետությունների միջև և նրա գոյությունն անամպ չի եղել: Հարևանների միջև հաճախակի ու ավերիչ ռազմական գործողությունները սովորաբար տեղի են ունեցել հայկական հողի վրա՝ բազմաթիվ տհաճություններ պատճառելով թե իշխանա-վորներին, թե բնակիչներին: Չեն դադարել նաև հայկական թագավորության վրա ազդեցություն ունենալու համար պայքարը, այն նվաճելու փորձերը և Մեծ Հայքի թագավորները ստիպված են եղել հաշվի առնել այդ փաստը: Ըստ իրավիճակի այս կամ այն կողմը թեքվելով՝ նրանք «երկվեկտոր» քաղաքականություն են վարել և որպես կանոն այդ հզոր պետություններից ոչ մեկի ենթակայության տակ չեն եղել, թեև հաճախ հենց հայկական գործոնով է պայմանավորված եղել դրանցից որևէ մեկի վճռական գերակայությունը: Փաստորեն պատմության բավականաչափ երկար ժամանակահատվածների ընթացքում գտնվելով իր պատմական վերելքի իրավիճակում՝ Մեծ Հայքն իր հզորությամբ եղել է երրորդը Միջերկրածովյան և Առաջավոր Ասիայի պետությունների մեջ:

Մեծ Հայքը գոյատևել է մինչև 387թ., երբ տեղի ունեցավ նրա բաժանումը Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիայի) և Սասանյան Պարսկաստանի միջև, իսկ պաշտոնապես՝ մինչև 428 թվականը, ինչը համապատասխանում է 708 և 749 տարի պատմական

ժամանակահատվածի: Եթե նույնիսկ այդ յոթ դարերից հանենք այլ երկրների ռեալ տիրապետության տասնամյակները, կունենանք միջազգային արենայում բավականին ազդեցիկ, զարգացած ռազմաքաղաքական կառուցվածք, վարչական համակարգ և մշակույթ ունեցող ունիտար պետության զուտ գոյության առավել քան վեց հարյուրամյակ:

Հարց է առաջանում, թե ո՞րն է բոլորին հասանելի այս պատմական տվյալների շարադրման նպատակը, ինչո՞վ է պայմանավորված այսպիսի հետաքրքրությունը Մեծ Հայքի նկատմամբ, այլ ոչ թե, ենթադրենք, ավելի հին Ուրարտուի կամ, ասենք, Անիի միջնադարյան թագավորության կամ Կիլիկյան հայկական թագավորության նկատմամբ: Եվ ընդհանրապես ի՞նչ կապ ունեն այս բոլորի հետ ոչ մասնագետ-պատմաբան հեղինակները: Հրատարակման հիմնական նպատակը կնշենք մի քիչ ավելի ուշ, իսկ այժմ բոլորովին չնսեմացնելով հայոց պատմության այլ դրվագների նշանակությունը, նախ՝ ուղղակի հարկ ենք համարում ընդգծել, որ բոլոր դեպքերում հենց Մեծ Հայքն է կապված մեր պատմության առավել երկարատև, փայլուն և, կարելի է ասել, ճակատագրական ժամանակաշրջանի հետ: Չէ՞ որ հենց այդ ժամանակ է Հայաստանը դարձել քրիստոնեությունն իբրև պետական կրոն (301թ.) ընդունած առաջին երկիրը, որն իր պատմական ընտրությունը հերոսաբար պաշտպանել է՝ չնայած Ավարայրի ճակատամարտում կրած պարտությանը: Այդ ժամանակաշրջանում հիմնադրվել են Հայաստանի 13 մայրաքաղաքներից 5-ը՝ Երվանդաշատը (մ.թ.ա.200թ.), Արտաշատը (մ.թ.ա.176թ.), Վաղարշապատը (մ.թ.ա. II դար), Տիգրանակերտը (մ.թ.ա.78թ.), Դվինը (մ.թ. 355թ.): Երկիրն արտաքին աշխարհի, հատկապես՝ հունա-հռոմեական և պարսկական քաղաքա-կրթությունների հետ ունեցած ռազմաքաղաքական, տնտեսական և կրոնական կապերի հետ մեկտեղ ունեցել է նաև մշակութային շփումներ: 405 թվականին՝ արդեն պետականության մայրամուտի ժամանակաշրջանում Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական 36 տառերից բաղկացած այբուբենը, որը տասնվեց դարերի ընթացքում միայն աննշան փոփոխություններ է կրել:

Երկրորդ՝ մեր իրականության մեջ Մեծ Հայքի նյութական մշակույթին հատկապես վերջին տարիներին շատ քիչ ուշադրություն է դարձվում: Այն, ինչ ցուցադրվում է, դրանք հիմնականում մ.թ.ա I

դարում կառուցված Գառնիի տաճարը, հնագիտական պեղումների արդյունքներն ու թանգարանների արտեֆակտերն են: Զարմանալի է, բայց յոթ հարյուրամյակի հարուստ պատմությունը, որը համաշխարհային կարևոր նշանակություն ունեցող Միջերկրածովյան և հարակից շրջանների անքակտելի օրգանական մասն է կազմել, մնացել է մեր մշակութային ինֆորմացիոն քաղաքականության ետնաբեմում և հարկ եղած ձևով չի լուսաբանվում ոչ Հայաստանում, ոչ համաշխարհային մասշտաբով:

Այժմ այն մասին, ինչի համար, ըստ էության, գրվել է այս հոդվածը: Չմոռանանք, որ Մեծ Հայքի պատմական արենայում հայտնվելը մ.թ.ա. 321թ. դարձել է անվիճելի փաստ՝ դրանից բխող աշխարհաքաղաքական հետևանքներով: Եթե այդ տարեթիվը ընդունենք որպես ելակետային, պարզ կդառնա, որ 2029 թվականին կլրանա հայկական երբևէ գոյություն ունեցած թագավորություններից ամենափայլունի ստեղծման 2350 տարին, որը կարելի է ասել՝ նշանավորում է հայոց պատմության, եթե ոչ ոսկե, ապա ծայրահեղ դեպքում՝ արծաթյա դարաշրջանը:

Անկախ տարիքից, սեռից, կրթական մակարդակից, կուսակցական կամ այլ պատկանելությունից՝ Հայաստանի յուրաքանչյուր բնակչի, սփյուռքում ապրող մեր հայրենակցի համար, ով իրեն հայրենասեր է համարում, պետք է հասկանալի լինի այդ կլոր տարեթվի նշանակությունը: Հարցն այն է, թե արդյո՞ք մենք պատրաստվում ենք ընդհանրապես նշել այդ փառահեղ հոբելյանը և եթե՝ այո, ապա ի՞նչ մակարդակով: Կարելի է իհարկե, առանձնապես չլարվելով՝ սահմանափակվել շնորհավորանքներով, ռադիո և հեռուստահաղորդումներով, մամուլում հրատարակվող հոդվածներով, մի քանի ցուցահանդեսներով, արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ գիտաժողովներով, երկրի առաջին դեմքերի մասնակցությամբ հոբելյանական երեկոյով, Հանրապետության հրապարակում կազմակերպված գալա-համերգով, հուշարձանի տեղադրմամբ, ասենք՝ Երվանդ III-ի որպես Մեծ Հայքի հիմնադրի և այլն: Այս բոլորն, անշուշտ, անհրաժեշտ է, բայց սա հենց այն դեպքն է, երբ միջոցառումների նման ստանդարտ ընթացակարգն ակնհայտորեն անբավարար է: Ի վերջո, խոսքն այստեղ ոչ թե ականավոր գործչի հոբելյանի մասին է, այլ՝ մեր երկրի յոթ հարյուրամյակ ձգվող արծաթյա դարաշրջանի սկզբի: Անհրաժեշտ է այդ փաստի այնպիսի

նյութականացում, որը հասկանալի լինի ամբողջ աշխարհին, ասենք՝ Մեծ Հայքի հինգ մայրաքաղաքների ընդհանրացված պատկերի տեսքով: Դա նաև պետության մշակութային քաղաքականության հարց է, որն ունի ռազմավարական բազմաթիվ տեսանկյուններ:

Ի դեպ, Մեծ Հայքի հինգ մայրաքաղաքների առաջին տառերով կազմվում է ՏԱԴԵՎ հապավումը, որը կարող է դառնալ հինգ նախորդ մայրաքաղաքների այդ ընդհանրացված պատկերի անունը: Հայաստանի փոքրիկ հանրապետությունը պետք է կարողանա երկրի բնակչությանը, և հատկապես օտարերկրացիներին ակնառու, մատչելի և հասկանալի ձևով ցույց տալ, որ ժամանակին եղել է մեծ տերություն: Դա ոչ միայն տուրք է նախնյաց նկատմամբ, այլև ազգային «ես»-ի հաստատումն է ժամանակակից աշխարհում, մեր պատմական ժառանգության ամրագրումը և վերահսկողությունը, որը ոմանք փորձում են նվազեցնել, անտեսել, յուրացնել:

Թեև ժամանակակից Հայաստանի տարածքը կազմում է Մեծ Հայքի տարածքի 1/10-ը (Արցախի հանրապետության և ազատագրված տարածքների հետ միասին՝ 1/8-ը), սակայն դա թագավորական տիրապետության տակ եղածի հիմնական մասն է, որտեղ այժմ գտնվում են նշված հինգ մայրաքաղաքներից չորսի (բացի Տիգրանակերտից, որը գտնվում է Վանա լճի հարավ-արևմուտքում) ավերակները: Ուրեմն, ի՞նչն է խանգարում, որպեսզի պատմական այդ ավերակներից մեկի մոտ, որոնցից յուրաքանչյուրն ունի նաև իր ուրույն հետաքրքրությունը, կառուցվի «հնության ոգին» և Մեծ Հայքի մայրաքաղաքների ընդհանրացված ճարտարապետական տեսքը վերարտադրող թեկուզ մի փոքրիկ քաղաք: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ հոյակապ բան կստացվի. անտիկ քաղաքի իմիտացիա՝ այդ ժամանակաշրջանին բնորոշ պլանավորմամբ, բերդապարիսպներով, պալատներով, պաշտամունքային կառույցներով, այգիներով, երթևեկության միջոցներով, ամֆիթատրոններով, որոնց բեմահարթակներում կանցկացվեն տոնակատարություններ, մրցույթներ, սպորտային միջոցառումներ, կբեմադրվեն անտիկ հեղինակների պիեսները և համապատասխան թեմատիկայով ներկայացումներ, որոնց կարող են մասնակցել աշխարհի լավագույն թատերախմբերը:

Մի խոսքով, իր սովորական առօրյայով ապրող մի հրաշալի հնամենի քաղաք, որն իր ցուցադրություններով, էքսկուրսավարներով, թարգմանիչներով և հոգևոր, մշակութային, ժամանցային կենտրոնին

բնորոշ այլ բաղադրիչներով միաժամանակ կլինի նաև թանգարան բաց երկնքի տակ: Իսկ դրա կողքին՝ հնագետների ջանքերով գետնի ընդերքից վեր բարձրացած հինավուրց մայրաքաղաքի իրական պատմական նախատիպը, ասենք, Արտաշատը, որը, ըստ Պլուտարքոսի և Ստրաբոնի, հիմնադրվել է Արտաշես Ի-ի կողմից՝ հռոմեացիների հետապնդումներից փախչող և նրա արքունիքում ապաստան գտած Հաննիբալի առաջարկով ու երեք դար շարունակ եղել է Մեծ Հայքի մայրաքաղաքը՝ հռոմեացիների կողմից համարվելով հայկական Կարթագեն:

Իհարկե, կարող է թվալ, որ հեղինակները երազանքի գիրկն են ընկել և սավառնում են երկնքում, քանի որ միշտ կարելի է ստանալ ավանդական «փող չկա» պատասխանը: Բայց փողը բոլորին և միշտ չի հերիքում. դա պատճառ չէ անգործ նստելու ու միջոցների անբավարարությունից բողոքելու համար: Այն ամենի մի մասը, ինչն այժմ մտնում է մարդկային քաղաքակրթության ոսկե ֆոնդի մեջ, բոլորովին էլ համընդհանուր բարեկեցության հարմարավետ պայմաններում չի ստեղծվել: Օրինակ, միջնադարյան Եվրոպայում անընդմեջ պատերազմների, բազմաթիվ կյանքեր խլած սոված տարիների, շատ երկրներ ու տարածաշրջաններ ամայացրած ժանտախտի պայմաններում սերնդից սերունդ չէր դադարում իրենց գեղեցկությամբ ու հարմոնիայով երևակայությունն ապշեցնող հոյակերտ տաճարների շինարարությունը: Բացի այդ, Տադեվ (պայմանականորեն այդպես անվանենք) քաղաքի կառուցումը միանգամայն կարող է դառնալ համահայկական մի միջոցառում, որին իր մասնակցությունը կարող է բերել ՀՀ բնակչությունը թվաքանակով գերակշռող սփյուռքը: Միևնույն ազգի ներկայացուցիչներին ոչինչ չի կարող ավելի լավ միավորել քան սեփական երկրի վաղեմի փառքն ու մասշտաբները հիշեցնող հսկայական, համաշխարհային նշանակություն ունեցող մի բանի ստեղծումը, որը «շագրենի կաշվի» նման սերտացնում է տարբեր ժամանակները՝ միաժամանակ պահպանելով պատմական կորիզը և հետաքրքրությունը սեփական անցյալի նկատմամբ: Ավելորդ չէ նշել նաև որ վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում Հայաստանում այնքան բան է կառուցվել, որ շինանյութը և միջոցները կբավարարեին այդպիսի ոչ մեկ քաղաքի համար:

Առօրյա անցուդարձի մեջ չի կարելի մոռանալ վեհ նպատակների մասին: Ինը տարին, որ մնացել է մինչև հոբելյանական տարեթիվը,

բավական է փոքրիկ հրաշք գործելու համար: Գործի գրագետ կազմակերպման դեպքում Տաղեվ քաղաքի ստեղծումը ծանր բեռ չի դառնա ՀՀ սահմանափակ բյուջեի վրա, իսկ ժամանակի ընթացքում կարող է դառնալ եկամտի աղբյուր: Ակնհայտ է, որ նման միջոցառումներն ունեն բիզնես-բաղադրիչ թեկուզ այն բանի համար, որ կարող են լրացուցիչ ու բավանանին գրավիչ խայծ դառնալ (ինչու ոչ) դեպի Հայաստան տուրիստական հոսքերի մեծացման համար: Այժմ տուրիստների կողմից առավել այցելվող վայրերն են Գառնին ու Գեղարդը, Էջմիածինը, Տաթևը, Նորավանքը, Խորվիրապը, Սևանը, Քարահունջը և այլն, մինչդեռ տուրիստական պարտադիր երթուղիներից մեկը կարող է դառնալ «Մեծ Հայքի թագավորների հինավուրց մայրաքաղաքի ռեկոնստրուկցիան», կամ ուղղակի «Մեծ Հայքի մայրաքաղաքը»: Միայն այդ բառակապակցությունը կարող է մեծացնել հնավայրերի բազմաթիվ սիրահարների ու ընդհանրապես ամեն կարգի տուրիստների հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ և հրճվանքով լցնել բոլոր նրանց սրտերը, ում մեջ դեռ չեն խլացել հայկական գեները: Անհրաժեշտ է միայն մի փոքր բան. պետք է վճիռ կայացնել, իսկ մնացածը կստացվի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մ.թ.ա. 321 թվականն ընդունված է համարել հետագայում Մեծ Հայք կոչվող Արարատյան անկախ թագավորության վերջնականորեն պատմական արենայում հաստատվելու ժամանակաշրջանը: Եթե այդ թվականն ընդունենք իբրև ելակետ, կտեսնենք, որ 2029 թվականին կլրանա հայկական պատմության ամենափայլուն ժամանակա-հատվածներից մեկի 2350-ամյակը: Առօրյա հոգսերի մեջ չի կարելի մոռանալ նաև վեհ նպատակների մասին և հարցն այն է, թե այդ նշանակալի հոբելյանն ուզում ենք արդյոք տոնել ըստ պատշաճի: Դա ոչ միայն հարգանքի տուրք է մեր նախնիներին, այլև ժամանակակից աշխարհում մեր ազգային «ես»-ի, մեր պատմական ժառանգության հաստատումն ու նաև վերահսկողությունը դրա նկատմամբ, այն, ինչը ոմանք փորձում են նվազեցնել, անտեսել, յուրացնել: Բազմաթիվ տեսանկյուններից մեծ նշանակություն կունենա Մեծ Հայքի պատմական ավերակներից մեկի, օրինակ՝ Արտաշատի կամ մեկ այլնի մոտ ստեղծել Մեծ Հայքի հինգ մայրաքաղաքների ճարտա-րապետական ընդհանրացված տեսքը վերարտադրող քաղաքի թեկուզև մի փոքրիկ պատկեր:

Բանալի բառեր. Մ.թ.ա. 321, Մեծ Հայք, հոբելյան, անտիկ քաղաք

К ЮБИЛЕЮ ФОРМИРОВАНИЯ ВЕЛИКОЙ АРМЕНИИ

Грант Аракелян
Доктор философских наук,
ведущий научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА
Сусан Варданян
Кандидат философских наук, доцент
Ереванский Государственный Университет

РЕЗЮМЕ

321 год до н. э. принято считать датой окончательного утверждения на исторической арене независимого Айраратского царства, больше известного под более поздним названием “Великая Армения”. Взяв дату 321 год до н. э. в качестве отправной, получим, что в 2029 году исполнится 2350 лет с момента создания самого, пожалуй, блистательного века армянской истории. За повседневной суетой не следует забывать о великих целях и вопрос в том, собираемся ли мы праздновать славный юбилей на должном уровне. Это не просто дань уважения предкам, но также утверждение своего национального “Я” в современном мире, фиксация и контроль над своим историческим наследием, которое кое-кто пытается умалять, замалчивать и присваивать.

Со многих точек зрения огромное значение имело бы возведение возле одной из исторических руин Великой Армении, например Арташата, хотя бы небольшого города “под старину”, воспроизводящего обобщённый архитектурный облик столиц Великой Армении.

Ключевые слова: д. н. э. 321, Великая Армения, юбилей, древний город.

FOR THE ANNIVERSARY OF THE FORMATION OF THE GREAT ARMENIA

Hrant Arakelian
Doctor of Philosophy,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA
Susan Vardanyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor
Yerevan State University

SUMMARY

321 BC is considered to be the date of the final approval on the historical arena of the independent Airarat kingdom, better known under the later name “Great Armenia”. Taking the date 321 BC as a starting point, we get that in 2029 have passed 2350 years since the creation of the most brilliant century of Armenian history. In the hustle and bustle of everyday life, one should not forget about great goals and the question is whether we are going to celebrate a glorious anniversary at the proper level. This is not just a tribute to the ancestors, but also the assertion of our national "I" in the modern world, fixation and control over their historical heritage, which some are trying to belittle, suppress and appropriate.

From many points of view, it would be of great importance to erect, near one of the historical ruins of Great Armenia, for example Artashat, at least a small “antique” town, reproducing the generalized architectural appearance of the capitals of Great Armenia.

Key words: 321 B.C., Great Armenia, anniversary, ancient city.

ВАГРАМ РАБУНИ О ВОЗНИКНОВЕНИИ ЦАРСТВА И ЦАРСКОЙ ВЛАСТИ

Карлен Мирумян
Доктор философских наук, профессор,
ведущий научный сотрудник Института философии,
социологии и права, НАН РА

Биографические сведения о выдающемся философе и политическом деятеле Киликийского армянского государства Ваграме Рабуни (XIII в.) практически отсутствуют. Неизвестны также даты рождения и смерти. Точно известно лишь, что некоторое время он учительствовал в Ламброне, а затем был назначен секретарём, канцлером царской канцелярии при царе Киликийского армянского государства Левоне III (1270–1289 гг.). Он оставил богатое письменное наследие, включающее как религиозно-богословские, так и научно-философские произведения. Среди них выделяется “Речь”, произнесённая на торжественной церемонии коронации царя Левона III перед массовой аудиторией, в присутствии многочисленных князей, вельмож и известных людей страны.

В XIII веке вследствие осложнения геополитической ситуации в регионе внутреннее состояние Киликийской Армении стало неустойчивым. На повестку вновь был поставлен вопрос межцерковной унии, на этот раз – с Римско-католической церковью. Естественно, что